

համապատասխանող հայտի ապահովում, իսկ գնահատող հանձնաժողովը կրել է պարտականություն ստուգելու ոչ միայն հայտի ապահովման առկայության փաստը, ներկայացված հայտի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ հրավերի պահանջներին անհամապատասխանող հայտի ապահովման փաստի արձանագրման դեպքում ծագել է գնահատող հանձնաժողովի հայտը մերժելու պարտականությունը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ նույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: (...):

Տվյալ դեպքում հենց հայտում արձանագրվել է «Արփիսուլար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի անհամապատասխանությունը հրավերի պահանջներին, որպիսի պայմաններում հանձնաժողովն իրավաչափորեն կիրառվել է ՀՀ օրենսդրության նորմերը և Հայցվորի հայտը գնահատել է անբավարար՝ կայացնելով իրավաչափ որոշում:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ «Արփիսուլար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Հիմնական պահանջը մերժման ենթակա լինելու պայմաններում ենթակա է մերժման նաև հայցվորի կողմից որպես ածանցյալ պահանջ ներկայացված՝ «Արփիսուլար» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն և ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու պահանջները:

4. Դատական ծախսեր.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման՝ դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դեկլարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Արփիսուլար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Ռենյուարլ Քոքասըս Քորփորեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ «Արփիսուլար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ «Արփիսուլար» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն և ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ

Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ



Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել <https://verify.e-gov.am> կայքում մուտքագրելով IE55-969E-4C54-A3CA հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝
cabinet.armlex.am